տեղ ամայի չմնայ: Եթէ մէկը որեւէ պատճառով անկարող է ցանք անելու, կերակրապետը պիտի յայտնի նահանգի պետին, որ սա հարկաւոր օժանդակութիւնը ցոյց տայ նրան: Նա ժամանակին պիտի հաւաքի եւ ամուր ու ապահով վայրերում ամբարի պետութեան համար սահմանուած բաժինը տարեկան բերքից — ցորեն, գարի, գինի, ձէթ եւն., հինը հանելով եւ յանձնելով կուսակալին, որ վաճառի յօգուտ պետութեան: Նա պէտք է հետեւի, որ իւրաքանչիւր բնակիչ իր տարեկան կերակուրն ունենայ եւ բացի դրանից պետական շտեմարաններում նա միշտ պիտի ունենայ երկու տարուան պաշար նահանգի ամբողջ ազգաբնակութեան համար, հաշուելով մէկ անձին երեք բեռ ցորեն: Նոյն ձեւով նա պիտի վարուի նաեւ անասունների կերի համար, որպէսզի աղէտի դէպքում, երեք տարով ապահովուած լինին ե՛ւ նահանգի բնակչութիւնը, ե՛ւ նրա անասունները: Այդ բոլոր հաշիւների համար նա պիտի օգտուի նահանգի վիճակագրութիւնից, որ ամէն դեկտեմբերին կազմում է նահանգապետը եւ ներկայացնում ազգային ժողովին (հ, ճժա):

7. Գանձապետութիւն. *գանձապետը գանձում է պետութեան եկամուտներն ու տուրքերը եւ պահում գանձը ամուր քաղաքում: Նա հաշուետու է ազգ. ժողովի առջեւ, գործում է նրա ցուցմունքներով եւ ամէն ամիս հաշիւ է ներկայացնում նրան* (հա):

8. Երկրաչափութիւն. *պաշտօնն է՝ կազմել Հայաստանի մանրամասն քարտէսը կամ յատակագիծը եւ գծել նահանգների ու գաւառների սահմանները: Երկրաչափն է տալիս ազգ. ժողովով կամ օրէնքով սահմանուած հողը քաղաքներին ու վանքերին եւ հետեւում է, որ շէնքերը կառուցուեն ըստ ընդունուած կարգի: Բոլոր նահանգական քաղաքների մօտ նա պիտի ունենայ մի լայնարձակ դաշտ, քաղցր ջրի վրայ, ուր կարողանայ բանակել* 60,000 *զօրք: Ոչ ոք իրաւունք չունի այդ դաշտում շէնքեր շինելու կամ այգի տնկելու: Հարկաւոր դէպքում՝ երկրաչափը բաց է անում ճանապարհներ եւ անց կացնում ջրեր, տնկում է անտառներ եւ ամէն կերպ զարկ է տալիս երկրի տնտեսութեան զարգացմանը* (հբ):

9. Պետ տկարաց եւ աղքատաց. *մի տեսակ խնամատարութեան նախարարութիւն է: Տըկարաց եւ աղքատաց պետը իւրաքանչիւր նահանգական քաղաքի մօտ պիտի ունենայ ընդարձակ մի տուն՝ տկարների, վիրաւորների, աղքատների եւ բոլոր խնամքի կարօտ անկարողների համար: Նրանց պահպանութիւնը եւ բժշկութիւնը պետութեան հաշուին են: Տկարաց եւ աղքատաց պետը պէտք է աշխատի զարգացնել երկրում արդէն ծանօթ բժշկական բոյսերի, ծաղիկների ու արմատների մշակութիւնը, նաեւ յայտնաբերել նորերն ու անծանօթները, որոնք արտահանուելով օտար երկրներ, կարող են մեծամեծ օգուտներ բերել թէ՛ մեր երկրին եւ թէ՛ միւս ազգերին: Յատկապէս բորոտութեամբ բռնուած հիւանդները պէտք է առանձնացուեն ու բժշկուեն անմարդաբնակ լեռներում* (հգ):

Այս բոլորից դուք տեսնում էք, որ Շահամիրեանը փորձել է ըմբռնել անկախ Հայաստանի բովանդակ կեանքը եւ նրա բոլոր ճիւղերի կարգադրութիւնը օրէնքով սահմանել: Սակայն չմոռանանք նաեւ անմիջապէս աւելացնել, որ այդ ճիւղերից մի քանիսը անտեսուած են նրա կողմից, իսկ բերուածների էլ կարգադրութիւնը հարկաւոր ճշդութեամբ եւ լրութեամբ չի արուած:

ՄԻ ՔԱՆԻ ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ ՊԱՇՏՕՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՄԱՄԲ

Հայաստանի պետական կազմակերպութեան ընդհանուր պատկերը տալուց յետոյ՝ անհրաժեշտ ենք համարում յետագայ դիտողութիւնները աւելացնել, որոնք կարեւոր են նոյն այդ պատկերի ամբողջացման տեսակէտից.—

1. Բոլոր կարեւոր պետական պաշտօնները — նոյնիսկ զինուորական — բղխում են անմիջականօրէն Ազգ. Ժողովից եւ ընտրութեամբ են: Ոչ մի նշանակովի մեծ պաշտօնեայ չկայ Հայաստանում:

Դրա հետ միասին՝ բոլոր խոշոր պաշտօնները երեք տարով են եւ նորոգւում են Ազգ. Ժողովի հետ միասին: Ուրիշ խօսքով՝ Ազգ. Ժողովի իւրաքանչիւր նոր կազմի հետ միասին նորոգւում է նաեւ երկրի բովանդակ պաշ-